ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/50

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով քաղաքացի Հակոբ Առաքելյանի 30.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>Քաղաքացի Հակոբ Ռազմիկի Առաքելյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

Քաղաքացի Հակոբ Ռազմիկի Առաքելյանը (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 30.03.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար սույն թվականի մարտի 2-ին հայտարարել է թիրախային ամբարձիչների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 15.03.2018թ.:

Հայտեր են ներկայացրել Հակոբ Առաքելյան ԱՁ-ն և «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N3 արձանագրության համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն:

«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն ներկայացրել է հայտի ապահովում իր կողմից ներկայացրած գնային առաջարկի հինգ տոկոսի չափով՝ 1.316.000 (մեկ միլիոն երեք հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամի չափով: Սակայն, որպես հայտի ապահովում ներկայացրած տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ստորագրվել է էլեկտրոնային եղանակով Հռիփսիմե Չիբլակյանի կողմից: Չնայած որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից կից

ներկայացվել է ընկերության տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից Հռիփսիմե Չիբլակյանին տրված լիազորագիր, գտնում ենք, որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է մերժվեր գնահատող հանձնաժողովի կողմից, քանի որ լիազորագիրը չի ստորագրվել Ընկերության տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից, ինչպես նաև տրված լիազորագրում նշված չէ վավերականության ժամկետը և վերջինիս կողմից հայտը ներկայացնելու համապատասխան լիազորությունը: Նշեմ նաև, որ Հռիփսիմե Չիբլակյանի կողմից ստորագրված է միայն տուժանքի մասին համաձայնագիրը, իսկ վճարման պահանջագիրը ստորագրված չէ ընդհանրապես:

Գտնում ենք, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք.

1.Չեղյալ համարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թիրախային ամբարձիչների ձեռքբերման գնանշման հարցման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N3 արձանագրությամբ կայացված՝ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով:

2. Պարտավորեցնել ընթացակարգի հանձնաժողովին հարցման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Հակոբ Առաքելյան ԱՁ-ին»:

Քաղաքացի Հակոբ Առաքելյանը պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերի ժամանակացույցի մասին, սակայն վերջինս չի ներկայացել:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) քաղաքացի Հակոբ Ռազմիկի Առաքելյանի կողմից 30.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ 12.04.2018թ. թիվ ԴՎԱ/1269 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 02.03.2018թ. հայտարարել է թիրախային ամբարձիչների ձեռքբերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի շրջանակներում մասնակից «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տնօրենը լիազորագիր է տրամադրել Հռիփսիմե Չիբլակյանին:

Ըստ բողոքաբերի՝ լիազորագրում նշված չէ լիազորագրի վավերականության ժամկետը և գնահատող հանձնաժողովը «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը պետք է գնահատեր անբավարար ու մերժեր:

Վերոգրյալի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի կասեցումը խիստ բացասական է ազդում մատակարարման բնականոն ընթացքի և զինված ուժերի հրաձգարանային սարքավորումների ապահովման վրա, կարծում եմ, որ քաղաքացի Հակոբ Առաքելյանի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Տիգրան Գասպարյանը:

3. «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ԳԲԽ-ԷՍ-2018/50 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն 13.04.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն, որպես հայտի ապահովում ներկայացրած տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ստորագրվել է էլեկտրոնային եղանակով Հռիփսիմե Չիբլակյանի կողմից: Չնայած որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից կից ներկայացվել է ընկերության տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից Հռիփսիմե Չիբլակյանին տրված լիազորագիր, գտնում ենք, որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է

մերժվեր գնահատող հանձնաժողովի կողմից, քանի որ լիազորագիրը չի ստորագրվել Ընկերության տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից, ինչպես նաև տրված լիազորագրում նշված չէ վավերականության ժամկետը և վերջինիս կողմից հայտը ներկայացնելու համապատասխան լիազորությունը: Նշվել է նաև, որ Հռիփսիմե Չիբլակյանի կողմից ստորագրված է միայն տուժանքի մասին համաձայնագիրը, իսկ վճարման պահանջագիրը ստորագրված չէ ընդհանրապես:

Բողոքաբերը գտնում է, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և /կամ/ հայտի ապահովումը եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացնելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Բողոքաբերը խնդրել է՝

1. Չեղյալ համարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թիրախային ամբարձիչների ձեռքբերման գնանշման հարցման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N3 արձանագրությամբ կայացված՝ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով:

2. Պարտավորեցնել ընթացակարգի հանձնաժողովին հարցման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Հակոբ Առաքելյան ԱՁ-ին»:

«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են առարկություններ՝ հետևյալ իրավական հիմքերով և հիմնավորումներով.

ա) «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից լիազորված անձ՝ Հռիփսիմե Չիլբարյանի կողմից հայտի ապահովման միայն Տուժանքի մասին համաձայնագիրը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու վերաբերյալ.

Մրցույթի հրավերով հայտի ապահովումը նախատեսված է 10-րդ հավելվածով: Հրավերի վերոհիշյալ հավելվածով մասնակցից պահանջվում է ներկայացնել տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

Սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ներկայացրել է հավելված 10-ը (հայտի ապահովումը)՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ մեկ էլեկտրոնային ֆայլով, և «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը առկա է և տեսանելի Հավելված 10-ի առաջին էջի՝ տուժանքի մասին համաձայնագիր: Սակայն բողոքաբերի կարծիքով՝ էլեկտրոնային թվային ստորագրությունը պետք է դրված լիներ նաև տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրի վրա: Եվ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վճարման պահանջագիրը առանձին հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ ըստ Բողոքաբերի՝ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի հայտը պետք է մերժվեր:

Այս կապակցությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Մեղրու տարածաշրջանային բժշկական կետրոնը ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1, ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 և ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3 ծածկագրերով մրցույթների շրջանակներում 21.12.2017թ. թիվ 324 գրությամբ հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է պարզաբանել հետևյալը.

«Մրցույթի մասնակից «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի Հավելված 10-ը (հայտի ապահովում) և վճարման պահանջագիրը կազմված է մեկ ֆայլով և դրված է էլեկտրոնային ստորագրություն միայն հավելված 10 ներքևի ձած անկյունում: Վճարման պահանջագրում չկա ոչ կնիք, ոչ ստորագրություն: Խնդրում եմ գրավոր պարզաբանեք՝ հայտը պետք է մերժվի, թե ոչ»:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆիանանսերի նախարարի տեղակալ Ա.Թամազյանը հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված

նույնականացման քարտում: Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման»:

Պետք է նշել, որ նույն խնդրի վերաբերյալ նույն մոտեցումն է ցուցաբերել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ իր բազմաթիվ որոշումներով (օրինակ, ԳԲԽ-ԷՍ-2018/20, ԳԲԽ-ԱՄ-2018/23 և այլն):

Գտնում ենք, որ նման պայմաններում, երբ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ներկայացվել են մեկ ֆայլով՝ թիվ 10 հավելվածով, և ֆայլի առաջին էջում՝ տուժանքի մասին համաձայնագրի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մի ֆայլը՝ հավելված 10-ը (հայտի ապահովումը)՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը, ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատելով:

Ուստի Բողոքաբերի դիրքորոշումը այս հարցի կապակցությամբ անհիմն է և ենթակա է մերժման:

բ) «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից՝ Հռիփսիմե Չիլբարյանին տրված լիազորագրում վավերականության ժամկետը չնշելու վերաբերյալ.

Բողոքաբերը ներկայացրած բողոքով, որպես «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժելու հիմք, նշել է այն, որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից Հռիփսիմե Չիբլակյանին տրված լիազորագրում նշված չէ վավերականության ժամկետ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածը կարգավորում է լիազորագրի տրման ժամկետի հետ կապված իրավահարաբերությունները: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածը թույլ է տալիս ընդհանրապես չնշել լիազորագրի վավերականության ժամկետ, և նման լիազորագիրը հանդիսանում է պատշաճ քաղաքացիա-իրավական փաստաթուղթ, սակայն ըստ նույն հոդվածի 1-ին մասի՝ եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է

տալու օրվանից մեկ տարվա ընթացքում, այսինքն տվյալ դեպքում վիճարկվող լիազորագրի վավերականության ժամկետը մեկ տարի է:

Ուստի Բողոքաբերի պնդումը այս մասով նույնպես, մեր կարծիքով, անհիմն է և ենթակա է մերժման:

գ) Վիճարկվող լիազորագրով Հռիփսիմե Չիբլակյանի կողմից հայտը ներկայացնելու լիազորությունը չամրագրելու վերաբերյալ.

Վիճարկվող լիազորագրով Հռիփսիմե Չիբլակյանին վերապահվել է նշված ծածկագրերով մրցույթների մասնակցության փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրելու լիազորություն: Վերոհիշյալ գործողությունը լիազորված անձ Հռիփսիմե Չիբլակյանի կողմից իրականացվել է, վերջինս իր էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատել է «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարած թիրախային ամբարձիչների ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտում առկա փաստթղթերը:

Ինչ վերաբերում է տվյալ հայտը ներկայացնելու գործողությանը, ապա այն կատարվել է օրենքի ուժով նման իրավասությամբ օժտված ընկերության ղեկավարումը իրանանացնող անձի կողմից՝ armeps էլեկտրոնային համակարգում գրանցված «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի պաշտոնական հասցեից:

Ուստի Բողոքաբերի պնդումը այս մասով նույնպես, մեր կարծիքով, անհիմն է և ենթակա է մերժման:

դ) Վիճարկվող լիազորագիրը Ընկերության տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից չստորագրելու վերաբերյալ.

Վիճարկվող լիազորագրով Հռիփսիմե Չիբլակյանին վերապահվել է լիազորություն էլեկտրոնային եղանակով ստորագրելու լիազորագրում նշված մրցույթների մասնակցության հայտերը: Ընկերության տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից չստորագրելու կապակցությամբ հայտնում ենք, որ լիազորագրում նշում է կատարված առ այն, որ լիազորագիրը ստորագրված չէ անձամբ Ռուբեն Ալումյանի կողմից:

Բանն այն է, որ 02.03.2018թ. Ընկերության տնօրեն Ռ.Ալումյանը դիմում է ուղղել «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ պարոն Վ.Աբաջանին՝ խնդրելով խորհրդի մոտակա նիստում քննարկել իր հրաժարականի և այլ անձի՝ որպես տնօրեն նշանակելու հարցը:

2018թ. ապրիլի 8-ին ժամը 11:00-ին հրավիրվել է «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի խորհրդի նիստ, որի ընթացքում որոշում է կայացվել 12.05.2018թ. հրավիրել «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի

բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով՝ Ընկերության տնօրեն Ռ.Ալումյանի աշխատանքից ազատելու և նոր տնօրեն նշանակելու հարցը քննարկելու համար:

Միևնույն ժամանակ նույն նիստում Խորհուրդը որոշում է կայացրել Ընկերության բնականոն գործունեությունը չխաթարելու նպատակով «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի գործունեության վերաբերյալ փասթաթղթերի վավերացումը (ստորագրումը) հանձնարարել Ընկերության գլխավոր հաշվապահ Հռիփսիմե Չիբլակյանին:

Այսպիսով, Ընկերության գլխավոր հաշվապահ Հռիփսիմե Չիբլակյանը լիազորվել է «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի խորհրդի կողմից, որպես Ընկերության տնօրեն Ռ.Ալումյանի ստորագրելու մասով պարտականությունները կատարող անձ, ստորագրելու Ընկերության բոլոր փաստաթղթերը:

Ելնելով նշված լիազորությունից՝ Հռիփսիմե Չիբլակյանը որպես Ընկերության տնօրեն Ռ.Ալումյանի պարտականությունները կատարող անձ՝ Ընկերության անունից լիազորել է Հ.Չիբլակյանին նաև էլեկտրոնային եղանակով հաստատելու հայտում ներառված փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի նախկինում կայացրած որոշումների (օրինակ, 06.02.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/28 որոշում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումների համաձայն՝ լիազորագրում առկա թերությունները մասնակցի հայտը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ, քանզի Կարգի 41-րդ կետի համաձայն՝ լիազորագիրը հանդիսանում է հայտում ներառվող և շտկման ենթակա փաստաթուղթ:

Հենց այս տեսանկյունից կիրառելի չէ Բողոքաբերի կողմից վկայակոչած «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որի համաձայն հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, քանզի նշված դեպքում, բողոքաբերի կողմից նշված անհամապատասխանությունները վերաբերում են լիազորագրին, այլ ոչ թե Կարգի 40-րդ կետով նշված չշտկվող փաստաթղթերին:

Ուստի հենց այս տեսանկյունից հիմնավոր չէ Բողոքաբերի պահանջը՝ չեղյալ համարելու ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թիրախային ամբարձիչների ձեռքբերման գնանշման հարցման ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 15.03.2018թ.ժամը 10:00 կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ

կայացված որոշումները «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելը:

Բացի այդ, Խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով գնումների բողոքարկման խորհրդի լիազորությունների շարքում բացակայում է բողոքաբերի կողմից պահանջված Խորհրդի «Չեղյալ համարելու պատվիրատուի որոշումը» լիազորություն»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից լիազորված՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է քաղաքացի Հակոբ Ռազմիկի Առաքելյանի 30.03.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 15.03.2018թ. ժամը 10:00 կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, որպես երրորդ կողմ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից 13.04.2018թ. Խորհրդին ներկայացված գրավոր դիրքորոշումը, «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի խորհրդի նիստի 05.04.2018թ. N1 արձանագրության պատճենը Պատվիրատուի 12.04.2018թ. թիվ ԴՎԱ/1269 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 02.03.2018թ. հայտարարել է թիրախային ամբարձիչների ձեռքբերման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել Հակոբ Առաքելյան ԱՁ-ն (այսուհետ՝ նաև ԱՁ) և «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:10-ին կայացած նիստի N 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն:

Հիմք ընդունելով Հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ Հաանձնաժողովը 28.03.2018թ. նիստի N 4 արձանագրության 1.2 կետով որոշել

է Ընթացակարգի 1-ին և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին, որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Հակոբ Ռազմիկի Առաքելյանը Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի որպես հայտի ապահովում ներկայացրած տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրն ստորագրվել է Հռիփսիմե Չիբլակյանի կողմից, որին տրված լիազորագիրը պատշաճ չէ՝ ստորագրված է ոչ թե «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից, այլ վերջինիս փոխարինող՝ մեկ այլ անձի կողմից, ինչը բողոքաբերի կարծիքով անթույլատրելի է և չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից: Բողոքաբերը նշել է նաև, որ տրված լիազորագրում նշված չէ վավերականության ժամկետը և վերջինիս կողմից հայտը ներկայացնելու համապատասխան լիազորությունը: Բացի այդ, Հռիփսիմե Չիբլակյանի կողմից ստորագրված է միայն տուժանքի մասին համաձայնագիրը, իսկ վճարման պահանջագիրը ստորագրված չէ ընդհանրապես: Ամփոփելով Բողոքով ներկայացված փաստարկները՝ բողոքաբերը եզրակացրել է, որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում Հրավերի պահանջներին, ուստի և Հանձնաժողովի կողմից այն պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1)հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

• 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով(...):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված հարցումներին ի պատասխան լիազորված մարմնի կողմից տրամադրված ոչ պաշտոնական պարզաբանումների համաձայն՝

գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից Խորհրդին է տրամադրվել ընկերության խորհրդի նիստի 05.04.2018թ. N 1 արձանագրությունը, որով նույն խորհրդի կողմից ընդունվել է որոշում՝ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի գործունեության վերաբերյալ փաստաթղթերի վավերացումը (ստորագրումը) հանձնարարել ընկերության գլխավոր հաշվապահ Հ. Չիբլակյանին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 321-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

• 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

• «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի գործունեության վերաբերյալ փաստաթղթերի վավերացումը (ստորագրումը) ընկերության գլխավոր հաշվապահ Հ. Չիբլակյանին հանձնարարելու որոշումը «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի խորհրդի կողմից ընդունվել է 05.04.2018թ., մինչդեռ վիճարկվող փաստաթղթերը վերջինիս կողմից ստորագրվել են ժամկետի առումով ավելի վաղ, այսինքն, լիազորագիրը ստորագրելու պահի դրությամբ Հ. Չիբլակյանը «ՆԻԻՊ-ԱԼՖԱ»

ՓԲԸ-ի գործունեության վերաբերյալ փաստաթղթեր վավերացնելու (ստորագրելու) լիազորություն չի ունեցել:

• «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից 10.03.2018թ. Հռիփսիմե Չիբլակյանին /նույն. քարտ 000936484, տրվ. 06.02.2018թ., 008-ի կողմից/ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով մրցույթի մասնակցության փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրելու համար տրված լիազորագիրը ստորագրված է մեկ այլ անձի կողմից, ընդ որում, տվյալ անձի՝ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի անունից դրա համար վերջինիս կանոնադրությամբ լիազորված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ Ընկերության կողմից չի ներկայացվել:

• «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տնօրենի կողմից Հռիփսիմե Չիբլակյանին մրցույթի մասնակցության փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրելու համար տրված լիազորագրում նշված չէ լիազորագրի գործողության ժամկետը:

• «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից տուժանքի մասին համաձայնությունը և դրան կից վճարման պահանջագիրը ներկայացվել են մեկ էլեկտրոնային փաստաթղթով (մեկ ֆայլով), ընդ որում, տուժանքի մասին համաձայնագրի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տնօրեն Ռուբեն Ալումյանի կողմից Հռիփսիմե Չիբլակյանին մրցույթի մասնակցության փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրելու համար տրված լիազորագիրը կազմված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ այն տրված չէ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի տնօրենի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկներին, որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա է միայն առկա էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև տրված լիազորագրում

գործողության ժամկետի բացակայությանը, ապա Խորհուրդը չի անդրադառնում դրանց քննարկմանը, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների խախտմամբ կազմված լիազորագրի առկայության պայմաններում ստորագրված հայտի ապահովումը, հետևաբար և հայտը, չի կարող որակվել Հրավերով նախատեսված պահանջներին համապատասխանող:

Վերոգրյալով պայմանավորված՝ Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացի Հակոբ Ռազմիկի Առաքելյանի կողմից 30.03.2018թ. Խորհրդին ներկայացած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նապխարարության կարիքների համար թիրախային ամբարձիչների ձեռքբերման գնանշման հարցման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով:

3. Պարտավորեցնել ընթացակարգի հանձնաժողովին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Հակոբ Առաքելյան ԱՁ-ին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ